



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



Հիմնահարցերի դասակարգում՝ ըստ առաջնահերթությունների կշիռա-միավորային մեթոդի՝ Դեյթի մեթոդի հիման վրա:

Ենթադրենք համայնքներից մեկում մասնակցային գործընթացի արդյունքում վեր են հանվել հետևյալ հիմնահարցերը.

- Մշակույթի տան դահլիճի վերանորոգում և կահավորում
- Համայնքային կենտրոնի ստեղծում
- Զբոսայգու բարեկարգում
- Աղբահանության բարելավում
- Խմելու ջրամատակարարման բարելավում
- Փողոցային լուսավորության վերականգնում
- Մանկապարտեզի վերանորոգում և էներգաարդյունավետության բարձրացում
- Կոյուղագծերի վերանորոգում
- Արտավայրեր տանող ճանապարհների վերանորոգում
- Խաղահրապարակների տեղադրում

Վերահանված հիմնահարցները, թեև շատ կարևոր են, սակայն հնարավոր է՝ իրատեսական չլինի բոլորը միանգամից լուծել: Ուստի անհրաժեշտ է դրանք բաժանել կոնկրետ, չափելի հատվածների, որպեսզի պարզ լինի, թե հիմնահարցերի ո՞ր մասն է անհրաժեշտ և հնարավոր լուծել առավել կարճ ժամանակահատվածում:

Օրինակ.

- Մշակույթի տան դահլիճի վերանորոգում և կահավորում
 - Դահլիճի ներքին հարդարում
 - Դահլիճի ջեռուցում
 - Նստարանների ձեռքբերում և կահավորում
 - Դահլիճի լուսավորության ապահովում
 - Ձայնա-տեսային սարքավորումների ձեռքբերում
- Զբոսայգու բարեկարգում
 - Զբոսայգու լուսավորության ապահովում
 - Զբոսայգու նստարանների տեղադրում
 - Աղբամանների տեղադրում
 - Թեքահարթակների տեղադրում
 - Պահպանում – կանաչ տարածքի խնամք, ծառատունկ և այլն:
- Աղբահանության բարելավում
 - Աղբամանների տեղադրում
 - Բնակչության հետ աշխատանքի բարելավում
 - Աղբավայրի ցանկապատում
 - Պայմանագրերի մշակում և կնքում
 - Տուգանքների սահմանում
- Խմելու ջրամատակարարման բարելավում

- Ջրագծի 3 կմ հատվածի վերանորոգում
- Ջրաչափերի տեղադրում

Համայնքային հիմնահարցները ըստ առաջնահերթությունների դասակարգելու համար անհրաժեշտ է դրանք գնահատել՝ **սահմանելով համընդհանուր չափանիշներ** վերհանված բոլոր հիմնահարցների համար:

Առաջարկվում է համայնքային հիմնահարցների առաջնահերթությունների որոշման և գնահատման հետևյալ չափանիշները.

- հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ դրամական արժեքի մոտավոր գնահատականը
- հիմնախնդրի լուծման բնապահպանական և առողջապահական ազդեցությունը,
- հիմնախնդրի լուծման արդյունքից օգտվող շահառու բնակչության թիվը,
- հիմնախնդրի լուծման համար հանրության կողմից աջակցությունը,
- հիմնախնդրի արդիականությունը:

Չնայած փորձ է կատարվել ներկայացնել հնարավորինս ամփոփ չափանիշներ, սակայն, վերոնշյալը չի համարվում որպես վեջնական տարբերակը, և հիմնահարցերը բացահայտող համայնքի ներկայացուցիչները ազատեն փոփոխելու այդ չափանիշները:

Հիմնահարցերի գնահատումը և առաջնահերթությունների որոշումը տեղի է ունենում Աղյուսակ 1-ի օգնությամբ: Աղյուսակի օգտագործման բացատրությունը ներկայացվում է ստորև:

Աղյուսակ 1. Հիմնահարցերի դասակարգման չափանիշները

Գնահատման չափանիշ	Միավոր	Կշիռը
Գնահատված դրամական արժեքը - v v v v v v v v v v = 10		
< 1,000,000 դրամ	4	5

1,000,000 դրամ –5,000,000 դրամ	3	
5,000,000 դրամ - 15,000,000 դրամ	2	
> 15,000,000 դրամ	1	
Բնապահպանական և առողջապահական դրական ազդեցությունը - v v v v v v v v = 8		
Բացասական	0	4
Չկա	1	
Ցածր	2	
Միջին	3	
Բարձր	4	
Շահառու բնակչության թիվը - v v v v v v = 6		
< 25%	1	3
25%-50%	2	
50%-75%	3	
75%-100%	4	
Հանրային աջակցություն - v v v v = 4		
Չկա	1	2
Ցածր	2	
Միջին	3	
Բարձր	4	
Արդիականությունը - v v = 2		

> 2 տարի	4	1
> 4 տարի	3	
> 8 տարի	2	
> 12 տարի	1	

Աղյուսակ 1-ը բաղկացած է երեք սյունակից՝ 1. գնահատման չափանիշ, 2. միավոր և 3. կշիռ:

1. **Գնահատման չափանիշ**՝ սյունակում ներկայացված են առաջարկված վերոնշյալ հինգ չափանիշները.

1. գնահատված դրամական արժեք
2. բնապահպանական և առողջապահական ազդեցություն
3. շահառու բնակչության թիվ
4. հանրության կողմից աջակցությունը,
5. հիմնախնդրի արդիականությունը:

Յուրաքանչյուր չափանիշի համար կատարված է քանակական կամ որակական բաժանում: Այսպես.

1. *Գնահատված դրամական արժեքը* գործողության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման մոտավոր գնահատումն է:

Այն կատարվում է հետևյալ սանդղակի օգնությամբ.

< 1,000,000 դրամ

1,000,000 դրամ - 5,000,000 դրամ

5,000,000 դրամ - 15,000,000 դրամ

> 15,000,000 դրամ

Դրամական արժեքը որոշելիս անհրաժեշտություն չկա կատարել ճշգրիտ հաշվարկ, այլ սանդղակների շրջանակում պետք է որոշել տվյալ հիմնախնդրի լուծման մոտավոր արժեքը՝ հաշվի առնելով տարբեր մասնակիցների ընդհանուր գիտելիքները և փորձը:

2. *Բնապահպանական և առողջապահական ազդեցությունը* տվյալ գործողության համայնքի վրա ունեցած հնարավոր բնապահպանական և առողջապահական ազդեցության գնահատումն է:

Այն կատարվում է հետևյալ սանդղակի օգնությամբ.

Բացասական

Չկա

Ցածր

Միջին

Բարձր

3. *Շահառու բնակչության թիվը* համայնքի բնակչության այն մասի տոկոսային արտահայտության գնահատումն է, որը հավանականորեն օգուտ կբաղէր ընտրված գործողության իրականացումից:

Այն կատարվում է հետևյալ սանդղակի օգնությամբ.

< 25%

25%-50%

50%-75%

75%-100%

4. *Հանրային աջակցությունը* գործողության իրականացմանը համայնքի բնակչության աջակցության հնարավոր չափի գնահատումն է:

Այն կատարվում է հետևյալ սանդղակի օգնությամբ.

Չկա

Ցածր

Միջին

Բարձր

5. *Արդիականությունը* միավոր ժամանակահատվածում տվյալ հիմնախնդրի հրատապությունն է:

Այն կատարվում է հետևյալ սանդղակի օգնությամբ.

0-2 տարի

2-4 տարի

4-8 տարի

8-12 տարի

Միավոր՝ սյունակում ներկայացված է բալային սանդղակ, որը միավորներ է սահմանում՝ յուրաքանչյուր չափանիշի քանակական կամ որակական ցուցանիշների համար: Օրինակ՝ ըստ Աղյուսակ 2-ի հիմնախնդրի մաս կազմող կոնկրետ գործողությունները գնահատելիս՝

1. Որքան փոքր է դրամական արժեքը, այնքան այդ գործողությունը ավելի բարձր միավոր է ստանում և հակառակը:
 2. Որքան ավելի մեծ է բնապահպանական և առողջապահական դրական ազդեցությունը, այնքան այդ գործողությունը ավելի բարձր միավոր է ստանում և հակառակը:
 3. Որքան ավելի մեծ կլինի շահառու բնակչության թիվը այնքան այդ գործողությունը ավելի բարձր միավոր է ստանում և հակառակը:
 4. Որքան ավելի մեծ կլինի հանրության աջակցությունը, այնքան այդ գործողությունը ավելի բարձր միավոր է ստանում և հակառակը:
 5. Որքան արդիական կլինի տվյալ գործողության իրականացումը, այնքան այն ավելի բարձր միավոր է ստանում և հակառակը:
2. Որոշվում է յուրաքանչյուր չափանիշի **կշիռը՝** (տես, Աղյուսակ 1, երրորդ սյունակ):
- ա. Աղյուսակ 1-ը պատկերվում կամ փակցվում է ֆլիփչարթին կամ գրատախտակին՝ դատարկ թողնելով երկրորդ և երրորդ սյունակները:
- բ. Մասնակիցներից յուրաքանչյուրին առաջարկվում է ընտրել համայնքային հիմնահարցների համար 5 չափանիշից, իր կարծիքով, 4 ամենակարևորը: Այս գործողությունը կատարելիս մասնակիցներն աշխատում են առանձին, առանց իրար հետ խորհրդակցելու և որոշելուց հետո նշում կատարում ընտրած 4 չափանիշի դիմաց՝ դատարկ թողնելով 5-րդը:
- գ. Հաշվարկվում է յուրաքանչյուր չափանիշի դիմաց արված նշումների թիվը
- դ. Յուրաքանչյուր չափանիշի հավաքած նշումների ընդհանուր թիվը բաժանվում է ամենացածր թվով նշումներ հավաքած չափանիշի վրա: Օրինակ՝ եթե նշումների թիվը

10, 8, 6, 4 և 2 է, ապա կշիռները կլինեն համապատասխանաբար՝ 5, 4, 3, 2 և 1 (տվյալ դեպքում ամենավոք թիվը 2-ն էր, ուստի յուրաքանչյուր չափանիշի հավաքած միավորների թիվը՝ 10, 8, 6, 4 և 2 համապատասխանաբար բաժանվել է 2-ի):

Ինչպե՞ս է գնահատվում հիմնահարցի մաս կազմող յուրաքանչյուր կոնկրետ գործողությունը (Տես, Աղյուսակ 2):

Հիմնահարցի մաս կազմող յուրաքանչյուր կոնկրետ գործողության առաջնահերթության միավորը որոշվում են չափանիշի կշռի և չափանիշի որակական կամ քանակական բաժանմանը համապատասխանող միավորի արտադրյալով:

Օրինակ՝ Աղյուսակ 3-ում կատարված է հիմնահարցերից մեկի մաս կազմող կոնկրետ գործողության գնահատումը: Համայնքի բնակիչների կողմից վեր հանված մշակույթի տան դահլիճի վերանորոգման և կահավորման հիմնահարցի մաս կազմող և կոնկրետ գործողություններից է դահլիճի ջեռուցումը:

Մասնակիցները այդ գործողության իրականացումը քննարկում են նախ՝ ֆինանսական տեսանկյունից՝ մոտավորապես գնահատելով ջեռուցման համակարգ տեղադրելու արժեքը: Ենթադրենք, ջեռուցումը մոտավորապես գնահատվում է 3,000,000 դրամ: Պարզում են, թե 3,000,000 դրամը ֆինանսական չափանիշի սանդղակի ո՞ր տողին է համապատասխանում: Այն տեղավորվում է սանդղակի 1,000,000 դրամ - 5,000,000 դրամ միջակայքում: Միավորների սյունակում նրան համապատասխանող միավորը 3-ն է: Իսկ հինգ չափանիշների մեջ ֆինանսական չափանիշի կշիռը 5 է: Ֆինանսական մասով՝ դահլիճի ջեռուցման առաջնահերթության միավորը հավասար կլինի 3-ի և 5-ի արտադրյալին, այսինքն՝ 15:

Այնուհետև դահլիճի ջեռուցումը գնահատվում է բնապահպանական և առողջապահական ազդեցության տեսանկյունից: Քանի որ կենտրոնացված ջեռուցման համակարգի տեղադրումը թույլ է տալիս գերծ մնալ վառելիքի արտանետումներից այն կարող է ունենալ, ենթադրենք *միջին* բնապահպանական և առողջապահական ազդեցություն, որին համապատասխանող միավորի՝ 3 և կշռի՝ 4, արտադրյալից կստանանք դահլիճի ջեռուցման բնապահպանական և առողջապահական ազդեցության առաջնահերթության միավորը՝ 12:

Նույն գործողությունը կատարվում է մյուս չափանիշների հետ: Գնահատելով դահլիճի ջեռուցումը շահառուների թվի տեսանկյունից՝ ենթադրենք, հանգում ենք այն եզրակացության, որ օգտվում է ամբողջ համայնքը: Այդ դեպքում այս չափանիշի մասով առաջնահերթության միավորը կլինի 12:

Հաջորդ չափանիշով, ենթադրենք, որոշվում է, որ տվյալ գործողությունն ունի հանրային *միջին* աջակցություն, այդ դեպքում, այս չափանիշի մասով, առաջնահերթության միավորը կլինի 6:

Վերջին չափանիշով գնահատվում է տվյալ գործողության արդիականությունը և եթե ենթադրենք, դա անհրաժեշտ է իրականացնել առաջիկա 4 տարիների ընթացքում, ապա այս չափանիշի մասով առաջնահերթության միավորը կլինի 3:

Գումարում ենք բոլոր չափանիշների արդյունքները՝ 10, 12, 12, 6, 3 և ստանում տվյալ հիմնախնդրի առաջնահերթության ընդհանուր միավորը՝ 43:

Գնահատման նույն գործընթացը պետք է կիրառվի հիմնահարցերի մաս կազմող բոլոր կոնկրետ գործողությունների համար:

Աղյուսակ 2: Հիմնահարցների մաս կազմող կոնկրետ գործողությունների գնահատման օրինակ

Հիմնախնդրի անվանումը	Հիմնախնդրի լուծման եղանակը	Գնահատված դրամական արժեքը (բայ)	Բնապահպանական և առողջապահական դրական ազդեցությունը (բայ)	Շահառու բնակչության թիվը (բայ)	Հանրային աջակցություն (բայ)	Արդիակատարություն	Ընդամենը (բայ)
Մշակույթի տան դահլիճի վերանորոգում և կահավորում	Մշակույթի տան դահլիճի ջեռուցում	15	12	12	6	3	43
	Մշակույթի տան դահլիճի ներքին հարդարում	7	8	12	6	3	36
	Մշակույթի տան դահլիճի նստարանների ձեռքբերում և կահավորում
	Մշակույթի տան դահլիճի լուսավորության ապահովում
	Մշակույթի տան դահլիճի ձայնատեսային սարքավորումների ձեռքբերում
Զբոսայգու բարելավում	Զբոսայգու լուսավորության ապահովում

	Զբոսայգու նստարանների տեղադրում
	Աղբամանների տեղադրում
	Թեքահարթակ ների տեղադրում
Խմելու ջրամատակա րարման բարելավում	Ջրագծի 3 կմ հատված վերանորոգում
	Ջրաչափերի տեղադրում

Աղյուսակ 2-ից երևում է, որ ըստ վերոնշյալ չափանիշներով գնահատման՝ մշակույթի տան դահլիճի ջեռուցումը ստացել է ավելի բարձ միավոր, քան ներքին հարդարումը, հետևաբար այն ավելի առաջնահերթ է: